

ՄԷՋՄՈՒԱԿԱԿԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Péra, Tauxim 65

Համբարստ ի/ի սեմա ետմի ՉԱՐՇԷՆՊԻՆ ղէ ճՈՒՄԱՍ ԻՐԻԼՍԻ
կ/ւնցերի նեջր օրունուր:

مجموعة اخبار

بكاوغلى تقسيم جادوى نومرو ٦٥

ՀԱՅԷԹԱՍԸՂԶԸՆ ԱՊՈՆԷ ԺԻՅԱԹԱՐԸ. — Իսթանպուլ իշին սենյակի 60 դրու, — 6 այլըղը 35. — Թաշրա իշին սենյակի 85. — 6 այլըղը 45 դր. տուր: — Բօսթա իսթանպուլի պիղէ ախտ տիր: — 15 կիւնյիլ ք նիւսիս 60 բարա տըր: — ԻԼԱՆԱԹ ՇԱՐԹԻԼԱՐԸ. — 1ինճի սահիֆէնին պէնէր սըրաւը 5, 2ինճի ղէ 3ինճի սահիֆէնին էր սըրաւը 3, ղէ 4ինճի սահիֆէնին պէնէր սըրաւը 1 դրու տըր: — 2օգ տէֆա տէր իսթիլէնէ իշին այլընթաքալը օրունուր: — Նիւսիսի 30 բր տըր:

Հաղէթահա միւթէլլիկ խոսուսաթ իշին ՅՈՒՂԱՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճապթ օրունա: — Իսթանպուլի ղէ պիղտէ Ն. 65:

ՃԲԵՂ ՀԱՆԴԵՍ ՄԸ

ԱՐԶ. ՅՈՒՂԱՆԷՍ ԵՊԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ինչ որ է պարտաճանաչ հօր մը դերը իր ընտանիքին մէջ, նոյնքան մեծ է կըրնանք ըսել, աւելի կարեւոր է Առաջնորդին դերը հանդէպ իր ժողովուրդին, իր թիւին: Գաւառներու մէջ, ուր կը տիրէ տակաւին նահապետական կեանք իր ամբողջ պարզութեամբ ու գեղեցկութիւնով, բարեպաշտ ու հեղեցիաւէր ժողովուրդը հոգեւոր ու բարոյական շատ զօրաւոր կապերով կապուած է իր Առաջնորդին հետ: Երբ երկեղած ու հաւատարիմ հաւատացեալը ընտանեկան վիշտ մը ունենայ, անմիջապէս կը դիմէ իր Առաջնորդին. երբ բարոյական ցաւ մը զգայ, ուղղակի կ'երթայ իր հոգեւոր հովիւին անկէ խորհուրդ առնելու, և երբ նիւթական անձկութեան մը մասնուի, Առաջնորդ Հայրն է որ անոր կ'օգնէ: Ժողովուրդին հայրն է սա, բարի ու գորովագութ հայրը, որ իր հոգեւորականներուն բոլորեւնէքներուն հետադիւր համար ոչ մէկ աշխատանք կը զլանայ, և կը հայթայթէ անոնց հոգեւոր հաղթ, առանց որուն կարելի չէ հասնիլ այն բարձր ճշմարտութեան և ուղղիղ ճամբուն, որ ուրիշ բան չեն, բայց ինչէ՛ր Քրիստոսի ճշմարտութիւնը և Քրիստոսի ճամբան: Առաջնորդ Հայրն է որ կը մխիթարէ ու կը սփոփէ իրենց երբ անոնք՝ բարոյական ցաւ մը կամ հոգեկան տառապանք մը ունենան: Եկեղեցիին պաշտօնեան է ան որ բարեպաշտ հաւատացեալներու գըլտեմը կ'անցնի՝ կառավարելու համար զանոնք հոգեւորապէս: Առաքեալներուն յաջորդը՝ որ կը թողու իր ծննդավայրը, ծերնողը և բարեկամները՝ երթալու համար հեռաւոր քաղաք մը, անցնի իր նուիրական պաշտօնին գլուխը, պաշտօն մը զոր Տէրը շնորհած է իրեն և որ վեր, չատ վեր է մարդկային պաշտօններէ, հոգեւոր պետի, հոգեւոր իշխանի աստուածային պաշտօնը:

Վերջերս այս բարձր պաշտօնին կոչուեցան չորս նորընտիր Եպիսկոպոսներ, որոնցմէ երեքն ձեռնադրութեան հանդէսը մանրամասնօրէն նկարագրեցինք արդէն այս սխանակներուն մէջ: Այդ երեք ձեռնադրութիւններէն քիչ ատեն ետք, այսօր ալ ներկայ գտնուեցանք չորրորդ ձեռնադրութեան, որով պիտի փակուի այս չորս Եպիսկոպոսացումներու շարքը, ի մօտից երկրորդ շարքի մըն ալ տեղի տալու համար:

Ինչպէս որ կանխաւ ծանուցուած էր արդէն, այսօր Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Մարաշի նորընտիր Առաջնորդ՝ Արճ. Յովհաննէս Գերապայժառ Մուրատեանի եպիսկոպոսական ձեռնադրութեան փառաւոր ու քրտագրու հանդէսը: Թէև առաջնորդը որովհետ էր չորս ձեռնադրութիւնները միասին կատարել, բայց, Արճ. Մուրատեան Յովհաննէս Եպիսկոպոսին ուշա-

նալուն պատճառաւ, այս չորրորդ ձեռնադրութեան հանդէսը յետաձգուեցաւ, որով գեղեցիկ առիթը ընծայուեցաւ՝ անգամ մը եւս ներկայ գտնուելու այն ճշմարտապէս վսեմ ու չքեղ հանդէսին, զոր պատահութիւնը և բազմը չենք ունենար յաճախ վայելելու և որուն ըմբոյխները՝ հոգեկան, կրօնային ու միանգամայն մտաւորական անհուն հաճոյք մըն է իրաւամբ:

Պարթև ու կորովի հասակ մը. փայլուն ու արտայայտիչ աչքեր, որ իր հոգիին ջնջ հայելիներն են կարծես և որ սրտիդ խորը կը նային շեշտակի: Հայրական անուշ ու վեհ դէմք մը. լայն ճակատ մը. կլոր, սիրուն մօրուք մը, ուր ձիւնը սկսած է — բայց դեռ չատ տարտամօրէն — իր ձերմակ հատիկները ցանել. ազդու ու զօրաւոր խօսուածք մը, ուր կ'ընդունար զարսկական ներդաշնակ շեշտ մը՝ որ Պարսկաստանի մէջ անցուած երկար տարիները և պատկերէն լեզուի մէջ իր ունեցած հմտութիւնը կը մատնեն. խօսուածք մը որ կը ստիպէ ունկնդրելու համար. իր ճամբորդած բազմաթիւ երկիրներուն սովորութեանց մասին սիրուն մանրադէպ մը կամ աղուր քննադատութիւն մը ունի պարզաստ շղթանքին վերայ. շատ պարզ հազուադէպ, պարզութիւն մը որ հոգիին պարզութիւնը կը յատկանշէ. իր դռները ամբողջ վայրկեան բաց են հարուստին ու աղքատին առջեւ և երկուքն ալ կ'ընդունին միեւնոյն համակեր ընդունելութեամբ ու միեւնոյն քաղցր ժրպիտով. վերջապէս իր ամբողջութեանը մէջ ունի չեմ գիտեր ինչ մը որ սիրելի կ'ընեն զինք ըսող ճանցողներուն: — Ահա Արճ. Յովհաննէս Եպիսկ. Մուրատեանը, իր ընդհանուր ուրուագծին մէջ:

Ծնած է Տիարպէթի, 1847ին և կը պատկանի տեղւոյն ամենէն հին ու ազնուական ընտանիքներէն մէկուն: Բաճաւայ ձեռնադրուած է 1864ին ի Չմառ, բարեկրթասակ Գրիգոր Ը. Կաթողիկոսին ձեռքով:

Պատկուց մասնաւոր սէր մը և զարմանալի հակում մը կը ցուցնէր եկեղեցականութեան, ինչպէս իր եղբայրն ու հօրեղբորորդին. ասոնք ալ այսօր, Արճ. Յովհաննէս Եպիսկ. Մուրատեանի նման, Կաթողիկէ Ս. Եկեղեցիին հոգեւոր ծառաներն են. առաջինը՝ Գեր. Մկրտիչ Վ. Մուրատեան, որ իր բոլոր ուսմունքը ըստացած է Չմառ, Հոռոմ և Պալիէրայի մէջ և որ վերջերս իր Արճ. եղբոր Եպիսկոպոսական ձեռնադրութեան ներկայ գտնուելու համար մայրաքաղաք եկաւ: Պալիէրայէն, ուր ժողովուրդապետ օգնականի պաշտօն կը կատարէր բաւական տարիներէ ի վեր ու կատարել գերք մը կը գրաւէր հոն իր շրջանակին մէջ. իսկ երկրորդը, այսինքն Արճ. Յովհաննէս Եպիսկոպոս Մուրատեանի հօրեղբորորդին այսօր Պրէնէնէի մէջ Կ-Փոլսի մարզէն է, Գեր. Վրդ. Թանէս Վ. Գալֆա-Մուրատեանը, որ իր ժողովուրդէն այնքան սիրուած՝ իր պաշտօնը կը կատարէ խզի՛մ մօտը:

Եկեղեցականութեան համար աղու՛ն

տաճած անզուսպ սէրը տեսնելով՝ 14 տարեկանին Արճ. Եպիսկ. Մուրատեանը Չմառ վրեցցին: Ծանրաբեկ տարի Չմառի վաղը մնալով՝ Արճ. Մուրատեան Գերապայժառ՝ բոլոր ուսմունքներէն համար մասնաւոր ընդունակութիւն մը ցուցուց և իր ուսուցիչներուն սիրելի հանգիստացաւ թէ՛ իր աշխատասիրութեամբ և թէ՛ իր օրինակելի բարի վարքով: Այնուհետեւ, Լիւսնաւու Դպրի քաղաքին մէջ, Յիսուսեանց վարժարանը ընդունուեցաւ իր հայերէնի ուսուցիչ, ուր ինք ալ Քրանսերէն ու լատիներէն լեզուները աւելի եւս կատարելագործեց:

Արճ. Մուրատեան Գերապայժառ՝ քահանայ ձեռնադրուելէն ետք, առաջին անգամ առաքելութեան գնաց Կեսարիա, ուր բաւական ատեն փոխ-առաջնորդի պաշտօնը կատարեց: Կեսարիայէն ետք դեռ շատ տեղեր պարտեցաւ իր Աւետարանի քարոյշը: Մասնաւորապէս գնաց Կիւրին, յետոյ իր ծննդավայրը՝ Տիարպէթի, այնուհետեւ Թագատ, Ատանա ևն: Իտալիոյ Լիվորնօ քաղաքն ալ ժողովրդապետութիւն ըրած է Արճ. Մուրատեան Գերապայժառ՝ իր եկեղեցական ամբողջ գործունէութեան միջոցին, միակ կէտ նպատակ ունեցած է եկեղեցիները պայծառացնել, վարժարաններ բարեկարգել, կրօնքն ու գիտութիւնը ծաւալել ամէն ուրեք, բարեպաշտ ժողովուրդին հոգեւոր մոռնալ իր պապական Եկեղեցիէն, վերջապէս զորոնք բոլոր այն բարի գործերը, զոր պարտի ընել Աստուծոյ պաշտօնեան:

Արճ. Մուրատեան Գերապայժառ՝ ամենէն վերջը գնաց Սպահան, ուր 13 տարեի չափ Առաջնորդութեան պաշտօն վարեց: Պարսկաստանի մէջ աղբիւրիկ ու կարեւոր դերք մըն էր գրաւած և, ինչպէս վերջին անգամ գրեցինք, Վեհ. Շահին կողմէ ընդունուելու բարձր շնորհին արժանացած է Ն. Վեհափառութեան կողմէ՝ Ելլը ու Խոռլիս պատուանշանին շրջկարգովը պատուուած է:

Արճ. Յովհ. Եպիսկ. Մուրատեան շատ մօտէն ու մանազին կերպով ուսումնասիրած է Պարսկաստանի բարձր ու սովորողները, կատարելապէս իւրացնելով նաեւ պարսկերէն լեզուն: (1)

(1) Կրցանք իրմէ Պարսկաստանի Հայ-Կաթողիկէներուն մասին մէկ քանի պղծտիկ տեղեկութիւններ ստանալ, զոր աւելորդ չենք կարծել անցողաբար նօթաւ դրել: — Սպահանի մէջ սա միջոցին կը գտնուէ 25 տուն Կաթողիկէ Հայ, և եթէ Պարսկաստանի միւս կողմերը գտնուող շատ հազուագիւտ Հայ Կաթողիկէներն ալ հաշուենք, դարձեալ անշուշտ թիւ մը կ'ունենանք: Առաջնորդը հոն կը նստի՝ Հայ Կաթողիկէներու մեծամասնութիւնը հոգ գտնուելուն, ուր մատուռ մըն ալ ունինք: — Արճ. Մուրատեան Գերապայժառ՝ Պարսկաստանէն Պոլիս գալուն, փոխանորդ վարդապետ մը դրած է Սպահանի մէջ: — Ժամանակ մը, Պարսկաստանի Սալմաստ քաղաքին մէջ բաւական թուով Հայ Կա-

Արճ. Մուրատեան Գերապայժառ՝ գիտէ մէկէ աւելի լեզուներ. բացի հայերէնէն, թրքերէն, ֆրանսերէն, իտալերէն, լատիներէն, արաբերէն, պարսկերէն, ինչպէս նաեւ Աստուածաբանութիւն ու իմաստասիրութիւն:

Վերջերս Օգոստոսիս Սուլթանը՝ իր բարձր գնահատումը յայտնեց, Յրդ. Կարգի Մէճիսիէ պատուանշանը չ'ընտրելով Արճ. Մուրատեան Գերապայժառի, ինչպէս միւս երեք Եպիսկոպոսներուն: Եպիսկոպոսական ձեռնադրութիւնէն ետք, Արճ. Յովհ. Եպիսկ. Մուրատեան պիտի երթայ իր պաշտօնատեղի՝ Մարաշ: Մարաշի մէջ կայ 500է աւելի տուն Հայ Կաթողիկէ: Էնկիւրիէ ետք Մարաշի թեմն է որ ամենէն աւելի Հայ Կաթողիկէ կը պարուենակէ:

Բայց, դժբաղդաբար, Մարաշի Հայ Կաթողիկէ վարժարանին արդի վիճակը հեռու է միսթարական երեւոյթի մը ունենալէ, սակայն կը յուսանք թէ՛ Արճ. Մուրատեան Գերապայժառի աշխատութեան և տեղւոյն Հայ Կաթողիկէ հասարակութեան ջանքերուն և մասնաւորաբար իր բարեգործութիւններով հանրածանօթ ինքնազեան գերաւատանին աշակցութեան շնորհիւ, վարժարանը մօտաւոր ապագայի մը մէջ աւելի փայլուն վիճակ մը պիտի ստանայ, եկեղեցիները աւելի եւս պիտի պայծառանան և թեմական ու առաջնորդական գործերը նախանձելի երեւոյթ մը պիտի առնեն:

Երեքալթի իրիկունէ Ս. Առաքուածածին Աթոռանիստ եկեղեցին՝ Եպիսկոպոսական Կոյման արարողութիւնը շատ գեղեցիկ կերպով կատարուելէ ետք, այս առտու ալ նոյն եկեղեցին մեծ շքով ու հանդէսով տեղի ունեցաւ Արճ. Յովհ. Գերապայժառ Մուրատեանի Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը:

Շատ կանուխէն երկուսեւ քաղմութիւն մը գրուած էր արդէն Մուր. Աստուածածին եկեղեցին: Բաղմութեան մէջ մեծ տեղ մը կը գրաւէին Տիարպէթիցիներ և Մարաշիցիներ, որ եկած էին, առաջինները իրենց երկրի զաւկին, իսկ երկրորդները՝ իրենց սիրելի նորընտիր Առաջնորդին Եպիսկոպոսական ձեռնադրութեան ներկայ գտնուելու համար:

Ժամը կին միջոցները՝ Ամեն. Տ. Պօղոս Էմմանուէլեան Կ-Պատրիարքը մեծ թափօրով ներս մտաւ եկեղեցիին դռնէն «Հրաշափառ» շարականով, ընկերակցու-

թողիկէ կը գտնուէր: — 1865ին, Վիեննական Միսթարեան Հ. Կղեմէս Միպիլեան և Հ. Մովսէս Վարդանեան վարդապետները, առաջին անգամ ըլլալով Սալմաստի մէջ Հայ Կաթողիկէութիւնը տալով իրենց անգամ ըլլալով իրենց ջանքերը մեծ արդիւնք մը չ'ընծայեցին: — Այնուհետեւ Վիեննայի Միսթարեանները նոյն նպատակին ուղեցին ծառայել, և դեռ մէկ քանի տարի առաջ՝ Հ. Աթմաստ Վ. Տիւրքեան՝ 2 տարի չափ Սալմաստ մընաց: — Այսօր Սալմաստի Պարսկահայ Կաթողիկէները շատ քիչուոր են:

Թեանք Կ-Պատրիարքական Փոխանորդ Արհ. Աւետիս Արք. Արքիպիսկոպիտ, Սիւլվանի և Թուրքիայի Առաջնորդ՝ Արհ. Սահակ Արք. Հաճախի, որ մասնաւորապէս Եպիսկոպոսական ձեռնադրութեանց ու Սինոդին ներկայ դանտելու համար զեռ վերջերս մայրաքաղաքս հասաւ, և Պրուսայի Առաջնորդ՝ Արհ. Յարութիւն Եպիսկ. ձառնախնի, որ անձնական տկարութեան պատճառաւ, չէր կրցած միւս երեք Եպիսկոպոսներու ձեռնադրութեան ներկայ գտնուիլ: Թափօրին հետ կու գային նաեւ Էնկիւրիի, Եգիպտոսի և Կեսարիայ երեք նորընտիր Առաջնորդները և նորակարգ Եպիսկոպոսները, Եկեղեցիներու Մեծ-ժողովրդապետները, Մայրաքաղ. և ոչ-Մայրաքաղ. վարդապետներ, օտարածէս Կաթողիկէ քահանաներ, Մանսիւհօր Պօղոս-մանէթօ, Յիսուսեանց Մեծաւոր Բէր Անտոն, ևն: Աշխարհականներու մէջ կը նըշմարտէին բաւական թուով ծանօթ անձեր:

Ներկաներուն մէջ կը տեսնուէր նաեւ՝ Մարաշի Հայ Կաթողիկէ հասարակութեան երեսնէրեքն Յարութիւն էֆ. Ուրբաք-եան, որ յատկապէս Մարաշէն Պոլսէն էր եկած, իրենց նորընտիր Առաջնորդին ձեռնադրութեան ներկայ գտնուելու համար, և որ Ս. Գրիգոր համբուրեց:

Եկեղեցին շատ փառաւոր կերպով դարձաւ զարուած էր շնորհիւ լուսարարական Արթիւն աղայի ջանքերուն, որ շատ բաւ գիտէ այս տեսակ բացառիկ պարագաներու առթիւ, այնքան տարբերութեամբ ընթացքին մէջ իր ստացած փորձառութիւնն ու վարդապետութիւնը ի վեր հանել:

Գարացի դասը շատ ներդաշնակ կերպով կազմակերպուած էր, և արդիւնաւորութիւն կ'ընէին ի մէջ աշուղՄէնէվիւնեան, Արագեան ու Գաշիվէնեան վրդ.ները, որ ծանօթ են արդէն իրենց անուշ ու զեղեցիկ ձայներով և որ սյուրբուան շքեղ հանդէսին վայրը անգամ մը եւս կրկնապատկեցին:

Ամեն. Կ-Պատրիարքը, Արհ. Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսները կը կըրէին իրենց ամենէն թանկագին ու զեղեցիկ զգեստները:

Ինչպէս առջի երեք ձեռնադրութեանց, այս անգամ ալ Արարողապետի պաշտօնը կը կատարէր Գրիգ. Յովսէփ Ծ. Վ. Ռոքոսեան:

Ձեռնադրութիւնը կատարուեցաւ իրեն յատուկ արարողութիւններով: Ամէն անգամ որ Արարողապետը «Հրամայեցէ՛ք...» կը կըրէին, վկայութեան կու գային եկեղեցական պաշտօնեաները՝ իւրաքանչիւրը իր ձեռքը ունենալով իր պաշտօնին խորհրդանշանները: Յետոյ աշխարհականները վկայութեան կանչուեցան, և հարուստ, էսնաֆ ու սղքատ դասակարգերէ երկուքական անձեր գացին համբուրել Ամեն. Կ-Պատրիարքին ձեռքը: Այնուհետեւ խորտուիլակները Եպիսկոպոսացուն առաջնորդեցին Կաթողիկոսական Աթոռին առջիւ, ուր սկսաւ Կոչման արարողութիւնը, մինչ զպիւրիներ քաղցրածախ կ'երգէին «Սուրբ Աստուած»ի հեղաղուր առթիւ, որ կ'ընդմիջուէր մերթ ընդ մերթ յոճական յոտակ, աղբու ու ներդաշնակ շէշտերէն, որուն անուշ արձագանքը կը միանար խոնկերու և աղօթքներու. «Խաբօյա էիք Տէրօթիկ»:

Շատ վաղ ու յուզիչ էր այն արարողութիւնը, ուր Եպիսկոպոսացուն իրեն եղած հարցումներուն կը պատասխանէր: Եւ Մուրատեան Գերապայծառ՝ մինչեւ հիւսիս ըրած ծառայութիւնները յայտնելէ ետք, կը խոստանար, ինչպէս սակե առաջ, նոյնպէս սակէ ետք ալ խնարճ ծառայ ըլլալ Յիսուսի, հաւատարիմ պաշտօնեայ Կրօնքի, ջերմ պաշտպան՝ Ս. Եկեղեցւոյ, հայր՝ իր հասարակութեան և պորտապաշտ առաքելին հովիւ՝ իր հօտին: Ապա յիշուեցան անուանները բոլոր այն Ս. Հայրապետներուն, որ Քրիստոնէական Կրօնքի և Ս. Եկեղեցւոյ համար մեծամեծ ծառայութիւններ ու անձնուիրութիւններ ըրած են: Նոյնպէս անաթեմիս կարգացուեցաւ բո-

լոր այն կեղծ հայրապետներուն դէմ, ինչպէս Նեսեօր ու Արիոս, որոնք հերետիկոսութեան ու հերձուածի սերունդը ցանկեցին Քրիստոսի փառախին մէջ:

Ապա Ձայնաւոր-Պատարագը շարունակուելով, Ս. Գրիգոր ընթերցումէն ետք, Ամեն. Կ-Պատրիարք Հայրը՝ երկու Արքեպիսկոպոսներէ շրջապատուած և Սեղանին առջեւ նստած՝ ձեռնադրութեան սկսաւ և նոր Եպիսկոպոսին գլուխը և աջ ձեռքը Ս. Միւռոնով օծեց: Միւս Եպիսկոպոսները իրենց Աթոռները բազմած էին:

Կ-Պատրիարքական Փոխանորդ Արքեպիսկոպոսը կարգաց նորընտիր Առաջնորդին Պատրիարքական Կնիզակը, որուն ընթերցումէն ետք, Արհ. Մուրատեան Գերապայծառ կարգաց իր Ուխտագիրը: Կ-Պատրիարքը նոր Եպիսկոպոսին գաւազանը, Եպիսկոպոսական թագը, մատանին, և միւսիւրոնը ու խաչը՝ ամէնքն ալ իրենց յատուկ աղօթքներով օրհնելէ ետք, յանձնեց Մուրատեան Եպիսկոպոսի:

Ի վերջոյ Կ-Պատրիարքը, երկու Արքեպիսկոպոսներն ու չորս Եպիսկոպոսները՝ նոր Եպիսկոպոսին հետ ողջագուրուեցան, իսկ վարդապետները, սարկաւազները, զպիւրիները և աշխարհական վկանները կարգաւ համբուրեցին Արհ. Մուրատեան Յովհ. Եպիսկոպոսի ձեռքը և օրհնութիւնը առին:

Ապա՝ Ամեն. Կ-Պատրիարքը շարունակեց Ձայնաւոր-Պատարագը նոր Եպիսկոպոսին հետ, և ժամը եօթը անցած՝ Ս. Պատարագը աւարտելով՝ ներկաները Կաթողիկոսարանի մեծ սրահը ելան, ուր Մարաշի վարդապետներէն Լիւսնի Վ. Բէյ-չէնեան՝ հայերէն, Սէն-Լուի վանատան նորընտանեղէն Մարաշցի Եղբ. Թորոս Շատարեղեան՝ ֆրանսերէն, իսկ նորընտիր Եպիսկոպոսին եղբայրը Մկրտիչ Վ. Մուրատեան՝ զարձակ հայերէն լեզուներով պարագային յարմար ճառեր արտասանեցին: Ամեն. և Գրիգորը. Հոգեւոր Տէրը՝ բարեմաղթութիւններ ըրաւ՝ մեր սրբերէ վհն. Կայսեր արեւշատութեան և նոյնպէս Լիւսնի ԺԳ. Ս. Քահանայապետին կենաց համար. գովեց ու շնորհաւորեց նորընտիր ու նորակարգ Եպիսկոպոսը:

Ներկայ բարձրաստիճան եկեղեցականներու մէջ կը տեսնուէր նաեւ՝ Գուռ-գաւուրի Պատրիարքարանի Կրօնական Ժողովոյ ատենապետ՝ Տ. Գրիգորիս Սրբաղան, որ շնորհաւորութիւններ և բարեմաղթութիւններ ըրաւ:

Միւս ներկաներն ալ իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին նոր Եպիսկոպոսին, և պատուասիրուեցան օշարակներով և անուշեղէններով:

Յորեկին, Կաթողիկոսարանի մէջ փառաւոր ճաշ մը տրուեցաւ՝ ի պատիւ Արհ. Յովհ. Եպիսկ. Մուրատեանի: Ամեն. և Գրիգորը. Հոգեւոր Տէրօջ շուրջը կը գտնուէին Արհ. Արհ. Արքիպիսկոպիտ Աւետիս և Հաճախ Սահակ Արքեպիսկոպոսները, և ձառնախնի Յարութիւն, Ղազարոսեան Կղեմէս, Սապաղազեան Պօղոս և Սիւլվան Մատթէոս Եպիսկ.ները, Գերապ. Գոյունեան Գերապայծառը և բոլոր այն Գերապիկներ և Յարգապետիւր Մայրաքաղ. ու ոչ-Մայրաքաղ. վարդապետները, որ այսօրուան հանդէսին մասնակցեցան: Ծաշի միջոցին բաժաններ առաջարկուեցան և պարագային յարմար բարեմաղթութիւններ եղան:

Մենք ալ մեր կողմէ, ինչպէս առկէ առաջ ըրինք միւս երեք Եպիսկոպոսներուն, նոյնպէս այս անգամ ալ կը չընորհաւորենք Արհ. Յովհաննէս Եպիսկոպոս Մուրատեանը, և ի սրտէ կը մաղթենք որ այս բարձր պաշտօնին մէջ Աստուածային օգնութիւնը միշտ իրեն հետ ըլլայ, որպէս զի կարենայ իր պարտականութիւնները կատարել լիովին, ծառայել յօգուտ Ս. Եկեղեցւոյ, Տէրութեան ու Ազգին և առաջացնել իր թիւը կրթական ու մտաւարական տեսակետներէ, հաստատել կրօնքին ու Կաթողիկէ Ս. Եկեղեցին սէրը իր ժողովուրդին սրտին մէջ և վերջապէս սիրով բոլոր իրեններէն:

ԵՆԳԱՐԷ

Տիւնքի բննչէնպիսի կիւնիւ, էնգարէ Հայրապետի Ս. Կղեմէսին խոր շէրիֆինն մուգատուէս եօթնուոր օլմար հասէպիլէ, էնգարէ Գաթօլիքէրի իշին էն սէվիլի պիւր կիւն վէ սէնէնիւ եօթնուորը իշինաւ էն պիւսիւքէրէրնտէն պիւրիսի տիր: Պուաղիզ Հայրապետին միւստիր շէֆաթըլա շէնիւրիդէ Սէմալէրտէն իհասն պուրուլուշ օլան մատիր վէ մանէվի ոյլիւմար նիյմէթլէրտէն տօլտեւ ճէմաթըմըմըլըն աղիզ Հայրապետէ օլան հիւսիսաթը միւնէթտարիսի վէ սըտոլ ու մուհապէթի ֆէվզէլատէ օլուպ, էնգարէ Գաթօլիքէրի հէր զէման վէ հէր ֆըրաթթտա Ազիզին իսմինէ մուգատուէս Բիլիսէնէ գօշարար վէ ծուռն միհրապարընը քէմալը հիւսթէթլէ իհաթա իտէրէր իտէ տէ, ալէլ խուսուս պու եւէվի մուպարէթի զայէթլէ մութանիսան սուրէթտէ զիյնէթաղ իյլէրէրէր: Պու սէնէ իտէ, իշպու եօթնու մէմուլտէն զիւտաէ պիւր զիյնէթ վէ շաշատ իլէ իհրա օլունուշ տուր:

Անգարիպ Կաթողիկոսարանտա իճթիմա իտէճէր Սինոգտա հաղըր պուլունուշ իւզըն Տէրիսաթթթթէթլէ աղիմէթ իտէն Սիւլվա-Թօգատ մէրիսաթար Արհ. Հաճախ Սահակ Արքեպիսկոպոս հաղթթլէրի իթի կիւն ազտէմ շէնիւրիդի թէշիթի պուսուրուպ, Եպիսկոպոսական փոխանորդ Գրիգ. Յովհաննէս Մ. Վ. Օհանեանը տալէթի նի գապուլ վէ եօլմուշուղընը պիւր կիւն թէշիթի իտիպ, Եկվի մէգքիւրտէ Հիսարգալէլէր իւզէրիտէ վալը Ս. Կղեմէս քիւլիսէթիլտէ սապահ ձայնաւոր Ս. Պատարագը թաղտիս վէ ազշամ տախի թափօր զիյնէթի իհրա իլէմիշ տիր:

Իշպու զիյնէթլէր իտէ զայէթլէ շաշատ լը օլուպ, իթի պուլունու մէնտէն պէրու Եպիսկոպոսական զիյնէթլէրէ հարթթլէրէ գալմըլ օլան էնգարէ էնալիսի սապահ վէ ազշամ քէսթլէրէ քիւլիսէն շիթապան օլմուշար տըր. շէօլէ քի, հէմ տէրուշըր քիլիսէ վէ հէմ թափօրն կիւզէրիկաւը հէր սընըթ էնալի իլէ խընճախընճ տօլմուշ տըր: Արհ. Գերապայծառ իտէ, շու թէսէլիպալաշ սէլանտան հիւս իթիկի մահգուզիլէթի տէֆաթլէ իշհար իթմիշ, վէ էնգարէ ֆուգարատը մէնֆաթթթէն մուսեսա Ս. Կղեմէս ընկերութիւնը ազալարընը պէզըր զարթթ վէ իթիլմաթա թէշիլիզ իլէմիշ տիր:

Միւշարիլէյ, շէնիւրիդտէ միւսէտտէտէն ինչա օլունուշ օլան Սնարատ Յզու-թիւն վանը վէ մէքթիլիլի վէ ֆուգարա գըզլար մէքթիլիլի վէ հէր իթի մէքթիլիլի սէքիլ տէրիսանէլէրին տախի զիւտաթթ իտիպ, պուլարատա թալիմ օլան 400իւ միւթէճալիլզ գըզ չօճուզարընը նէսայիս վէ թէպէրիւքտաթթըր բէտէրանէլէրիլէ թէպիլը գըլմըլ, վէ պու սապահ քի գաթար իլէ Տէրիսաթթթթէ միւթէվիճ. ճիհէն շէնիւրիդտէն հարթթթ իթմիշ տիր: Միւշարիլէյ կիւզէլ պիւր եօլմուշուզ վէ սալիմէն ալտէթիլի թէմէնիլ իլէտիկիլիլզ հիւսն չօպանը լաճըրգըմըլ Արհ. Ղազարոսեան Կղեմէս Եպիսկոպոս հաղթթլէրինն տախի իսմի շէրիֆիլէրին թէպիլը, վէ սէլէֆի զիլէրէֆիլէր Ս. Կղեմէսին Աթոռնտա նիյն սէնէլէր եաշաբըլ, ծուռն զիթի ճէմիլիլի նիյն նիյն տէֆալար զիյնէթաղ իթմիլէ միյնտէր օլմալարընը թէմէնիլ իտէրիլ: Յ. Վ. Պ.

Էնգարէ, 16)29 Նոյեմբեր 1901

ԱԶԳԱՅԻՆ

Բաղար կիւնիւ, Ս. Յովհան Ոսկեբերան քիլիսէպիտէ, մէգքիւր քիլիսէնի եւէվի մախուսընա հիւսթէթէն Կ-Բաթրիք իլիթպ. Էմմանուէլեան Պօղոս էֆ. հաղթթլէրի թարաֆընտան մուլտանիսան սուրէթտէ Գուստատը շէրիֆ թագտիս իտիլիլ տիր Պու զիյնէթտէ Կ-Բաթրիք վէ-

քիլի Արհ. Աւետիս Արք. Արքիպիսկոպիտ, Սիւլվա-Թօգատ Մէրիսաթար Արհ. Սահակ Արք. Հաճախ, Պրուսա մէրիսաթար Յարութիւն Եպիսկ. Կոպոս ձառնախնի, էնգարէ, Մըսըր վէ Գայսէրիէ Մէրիսաթարը՝ Արհ. հիւսապետի Ղազարոսեան, Սապաղազեան վէ Սիւլվան Եպիսկոպոսար, պիւր խալի միւթէհաղանը ըէհապիլն վէ պաղը միւթէպէրան իլէ խընճախընճ էհալի հաղըր պուլունուշար տըր:

Քիլիսէ զաեթթ կիւզէլ պիւր սուրէթտէ թէշիլիլ իտիլիլ վէ Ոսկեբերան քիլիսէպի գալարապետ վէ գալիլէրի՝ նաղմաթըր լուհանիլիլ հայրէթպալաշ պիւր սուրէթտէ իհրա իլէմիշ տիր:

Ազշամ տախի, Կ-Բաթրիկի միւշարիլէյն իրեասէթիլիտէ օլարագ, միւշարիլէյնի Արք. Եպիսկոպոսար վէ Եպիսկոպոսար հաղըր օլունուշարը հալտէ, Ժամերգութիւն իհրա իտիլիպ, քիլիսէ Մեծ-ժողովրդապետի Գերը. Պագշեան Նիկողայոս Մ. Վ. տէրքեար օլան պէլաղէթիլլէ միւսեսա պիւր քարոլ վէրմիշ տիր:

Պատէհու թափօր զիյնէթի իհրա օլունուպ, օրհնութիւն վէրիլէրէք, զիյնէթ խիթամ պուլունուշ տուր:

Կ-Բաթրիք իլիթպ. էֆ. հաղթթլէրի՝ Ս. Յովհան Ոսկեբերան քիլիսէպի Գարացի դաս հէյեթիլիլ ֆէվգէլատէ թալտիր իթմէքլէ, սաթր տէֆալար կիլիպ, պու քէրրէ տախի մէգքիւր հէյեթիլիլ թէշիլիլզէն, պիւր միւստա պալաշիլ վէրմիշ տիր:

Սահիս իտիր քի, չիմիլ մէգքիւր քիլիսէնի Գարացի դասը, Մեծ-ժողովրդապետին վէ թագ. Խորհուրդըն զայրէթ վէ հիմմէթլէրի սաեթսինտէ բէք միւքէմմէլ վէ մուսթապամ հասէ կէթիլիլիլ օլուպ, քիլիսէնէ կէլէնլէրին ճիւմէսի տէ, պու ճիհէթի թատիգ իթմէքտէ իտէլէր տէ, թէէսիւք օլունուր քի, էլան պիլտէ, քիլիսէնէ կէլէնլէրտէն չօլար, քիլիսէնի պունա մէսարիֆաթը քէնտիլ քէնտիլ օլմանըլ, եաղը, մուսնէ, Գարացի դասը վէ սաթիլէթիլ, քիլիլի ազշէ իլէ օլաուզունու տիւլիլիլիպ տէ, կէզտիլիլէն գանձանակարա ուսֆազ պիւր իտիլէ ազշիլիլիլ պիլէ գօյմանը չօգ կէթիլիլ օլար: Էն պիւսիւք տէն էն ուֆաղա գատար օլան իհթիլիլիլ զարուրիլէմիլզ, հաթթ թա զաիտէմիլ իլիլ լիւրար, մէճիլ տիլէլէր սաթիլ իտիլիլիլ հալտէ, պիւր բաղար կիւնիւ քիլիսէպի գանձանակընա 1 դշ. եալիսա 20 բարա, եա 40 բարա պըրագմաղ՝ պու գատար չօգ վէ պիւսիւք պիւր շէյ մի տիր:

Իւշ միւսնէլլ, եանիլ Թրապիլզոն, Հալէպ վէ Մարաին մէրիսաթար լըզլարը իլին մանէլլէրի էհալիսինճէ հիւսնի շահատէթ գուրաթը գաղան. մըլ օլան ըէհապիլիտէն էն միւսնա սիլլէրինի ինթիլիլալ իթմէք իւզրէ, եաղըն Սինոգ մէճիլիլ Կաթողիկոսարանտա՝ Կ-Բաթրիք իլիթպ. էֆ. հաղթթլէրինն իրեասէթիլ ալթընտա իւթիմա իտէճէք տիր: Պու իճթիլիլիլ, Կ-Բաթրիք վէքիլիլ Արհ. Աւետիս Արք. իլէ էլէէվմ շէնիւրիդտէ պուլունուշ Սիւլվա-Թօգատ մէրիսաթար Սահակ Արք. Հաճախ, Պրուսա մէրիսաթար Յարութիւն Եպիսկ. ձառնախնի, էնգարէ, Մըսըր վէ Գայսէրիէ մէրիսաթարը Ղազարոսեան Կղեմէս, Սապաղազեան Պօղոս վէ Սիւլվան Մատթէոս Եպիսկ. Կոպոսար պիլզաթ իլիթիլաթ իթիլիլէրի հալտէ, պուրատա հաղըր պուլունուշ մանախնիլար տու, եանիլ Ատանա,

Օսմ. էիրասը	100	դշ. տան	դշ. բր.
Էջնավը	սահմանի	դշ.	27 11
Բումէլի	չբնակարարի	գր.	109 50

